Հակոբ Թարփոշյան
«Ամերիա» ՓԲԸ-ի Կառավարման խորհրդատվական ծառայության խորհրդատու,
Հայաստանի պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ,
Էլ. հասցե՝ hakobtarposhyan@paara.am
DOI: 10.53614/18294952-2021.2-148

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ. ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Ձեռնարկատիրությունը տնտեսությունն առաջ մղող շարժիչն է, որը կենսական դեր է խաղում տնտեսական զարգացման գործում, ինչպես նաև զգալի փոփոխություններ է բերում շուկայական հարաբերություններում: Այնուհանդերձ, ոլորտում մի շարք հիմնախնդիրներ դեռևս բացահայտման և լուծման կարիք ունեն:

Հոդվածի նպատակն է հստակեցնել ձեռնարկատիրության սահմանումը, գնահատել ձեռնարկատիրության դերը տնտեսության, տնտեսական աճի և հասարակության համար: Բացի դրանից, քննարկել ոլորտում համաշխարհային միտումները և դրանց հիմքերը:

Սույն հետազոտության շրջանակներում, նախ ուսումնասիրվել և վերլուծվել են ձեռնարկատիրական ինստիտուտի էությունը: Գրականության ամփոփման արդյունքում մշակվել է ձեռնարկատիրության ամբողջական սահմանման հայեցակարգ, ինչը հետագա գիտական հետազոտությունների և վիճակագրական վերլուծությունների համար կարող է ծառայել որպես մեթոդաբանություն: Բացի դրանից, ձեռնարկատիրության և տնտեսական աճի միջև կապի, ինչպես նաև աշխարհում ձեռնարկատիրության զարգացման միտումների վերաբերյալ կատարվել է գրականության ակնարկ: Վերջինս կարող է դառնալ նոր հայացք Հայաստանում ձեռնարկատիրության ոլորտում հետագա հետազոտությունների համար:

Հիմնաբառեր. ձեռնարկատիրություն, կազմակերպություն,

տնտեսական աճ, բիզնես, նորարարություն, ձեռնարկատիրության սահմանում, սահմանափակ ռեսուրսներ:

Ներածություն

Ձեռնարկատիրությունը շուկայական տնտեսության առանցքային ինստիտուցիոնալ անկյունաքարն է, որը մեծապես նպաստում է տնտեսության աճին, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, աղքատության հաղթահարմանը և մի շարք այլ հիմնախնդիրների լուծմանը: Չնայած դրան, ոլորտում մի շարք հիմնախնդիրներ դեռևս մնում են չբացահայտված և չլուծված (Urbano, 2019):

Սույն հետազոտությունը նվիրված է շուկայական տնտեսության համար ձեռնարկատիրության կարևորության քննարկմանը և ոլորտի միտումների բացահայտմանը, ինչպես նաև առկա հիմնախնդիրների և դրանց լուծումների ուսումնասիրությանը, ձեռնարկատիրության և կազմակերպության սահմանումների հստակեցմանը:

Մեթոդը և տեսական հիմքը

Հաշվի առնելով հոդվածի նպատակը՝ հետազոտության համար մեթոդաբանական հիմք է հանդիսացել քանակական մեթոդի կիրառումը: Մասնավորապես, հոդվածի համար հիմք են ծառայել ձեռնարկատիրությանն առնչվող հարցերի ուսումնասիրությամբ զբաղված տնտեսագետների և փորձագետների գիտական գրականություն մշակումների, գիտաժողովների, սեմինարների, ամսագրերի և տարբեր գիտական հոդվածների նյութերը, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից մշակված երաշխավորությունները, ինչպես նաև համապատասխան ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությունը, այդ թվում՝ ՀՀ կառավարության որոշումները:

Հետազոտության գիտական հիմք են հանդիսացել տեսաբանների, մասնավորապես՝ ձեռնարկատիրության թեմաները ուսումնասիրած տնտեսագետների կողմից հրատարակված գիտական աշխատանքները: Դիտարկվող ոլորտում առավել ազդեցիկ հեղինակներից են՝ Շումպետերը, Սմիթը, Բաումոլը, Դեքերը, Նոդեն, Կլապերը, որոնց կողմից իրականացված աշխատանքներին տրամադրվել է առավել մեծ ուշադրություն: Հաշվի առնելով, որ նորարարական ձեռնարկատիրությունը գիտական համեմատաբար նոր ուղղություն է, մեծ ուշադրություն է դարձվել հատկապես ժամանակակից հեղինակներին և թարմ գրականությանը:

Արդյունքներ և քննարկում

Երկրի տնտեսական աճը և հարստության ստեղծումը խարսխված է ձեռնարկատիրական մթնոլորտի վրա, ինչն էլ իր հերթին հիմնված է ձեռնարկատերերի և կառավարիչների կարողությունների վրա (Cuervo, 2008): Ձեռնարկատիրությունը մեծապես նպաստում է տնտեսական աճին, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, աղքատության հաղթահարմա-

նը: Ձեռնարկատիրությունը կարևոր դեր է խաղում նաև աշխատանքի շուկայում՝ աշխատատեղերի ստեղծման առումով (Decker, 2014):

Ձեռնարկատիրությունը տնտեսական գործունեության այն ոլորտներից է, որը ամենաարագն է զարգանում տնտեսության, կառավարման, ֆինանսների և նույնիսկ օրենսդրական հատվածում (Baron, 2010): Բացի դրանից, ձեռնարկատիրության ակտիվությունից է որոշակիորեն կախված աղքատության մակարդակի կրճատումը, որի վառ օրինակն է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը (Naudé, 2013):

Ռեսուրսների միջոցով կարիքների բավարարման համատեքստում առանցքային է ռեսուրսների սահմանափակության խնդիրը, ինչը հրամայական է դառնում տնտեսության սուբյեկտների որոշումների կայացման և տնտեսության միտումների համար (UN General Assembly, 2015): Ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրն ավելի առաջնահերթ է դառնում հատկապես բնակչության թվի աճի և տնտեսության համակարգային ցնցումների համատեքստում: Այս առումով բարիքներ ստեղծող տնտեսական գործակալների՝ ձեռնարկությունների դերը անգնահատելի է: Ձեռնարկատիրությունը տնտեսական շարժիչի համար դառնում է կարևորագույն բաղադրիչը, քանի որ տնտեսության մեջ բարիքների ստեղծման նպատակով արտադրական սահմանափակ ռեսուրսների համակցությունը իրականացվում է առևտրային ձեռնարկությունների միջոցով:

Հասարակության մեջ այն մարդիկ, ովքեր իրենց վրա են վերցնում ձեռնարկատիրությամբ զբաղվելու պատասխանատվություն, կոչվում են ձեռներեցներ (Աղաջանյան, 2009): Դեռևս կես դար առաջ Վիլյամ Բումոլը (1968) ընդգծել է, որ «ձեռնարկատիրությունը ուսումնասիրել առանց ձեռներեցի, դա նույնն է թե Շեքսպիրին առանց Համլետի» (էջ 67): Ընդունված է ասել, որ ձեռներեցները հանդիսանում են տնտեսության շարժիչ ուժը, քանի որ հենց այս խումբն է, որ առավել հաճախ պարտավորված է առաջ բերել նորարարական լուծումներ և այդպիսով ապահովել որակական և քանակական բարելավումներ:

Հաջողության հասնելու համար ձեռներեցը պարտադրված է օգտագործել իր տաղանդը և որ ավելի կարևոր է՝ ներգրավել և կառավարել մյուսների տաղանդը (Lazear, 2003): Սրանով է պայմանավորված, որ շատ հաճախ առավել տաղանդավոր մարդիկ զբաղվում են ձեռնարկատիրությամբ, քանի որ նրանք ունեն բավականաչափ հմտություններ նորարարական գործունեությամբ զբաղվելու համար: Ընդ որում, առավել բարձր հաջողություններ են արձանագրում նրանք, ովքեր ունեն հմտություններ տարբեր ասպարեզներում (Lazear, 2003), քանի որ դա թույլ է տալիս առավել պատկերավոր հասկանալ ձեռնարկության ամբողջ արժեքային շղթան:

Ձեռնարկատիրական ինստիտուտ

Ձեռնարկատիրության կարևորությունը, ձեռնարկատիրության բնագավառում առկա հիմնախնդիրները և դրանց լուծումներն ուսումնասիրելու համար առաջնային է հստակ պատկերացում կազմել, թե այն ինչ է իրենից

ներկայացնում կամ որ նույնն է՝ սահմանել ձեռնարկատիրություն հասկացությունը:

Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն ձեռնարկատիրության տարատեսակ սահմանումներ (Patankar, 2014), որոնք բոլորն էլ ըստ էության նկարագրում են ձեռնարկատիրությունը այս կամ այն դիտանկյունից: Այսպես՝ ձեռնարկատիրություն եզրը առաջացել է ֆրանսերեն «entrepreneur»՝ ձեռներեց բառից, որը տնտեսական գրականության մեջ առաջին անգամ օգտագործվել է 19-րդ դարի առաջին տասնամյակում ֆրանսիացի տնտեսագետ Ժան Բապտիստի կողմից: Ըստ նրա՝ ձեռներեց է համարվում այն անձը, ով ռեսուրսներ է փոխանցում ցածր արտադրողականություն ունեցող անձից մեկ այլ՝ ավելի բարձր արտադրողականություն ունեցող անձի, այդպիսով ստեղծելով ավելացված արժեք (Vlasceanu, 2010): Ավելի ուշ քսաներորդ դարի ամենաազդեցիկ տնտեսագետներից մեկը՝ ավստրիացի Ջոզեֆ Շումպետերը ձեռնարկատիրությունը սահմանեց որպես «բիզնեսի ռազմավարության մշակման և իրականացման կամ բիզնեսի հիմնադրման ռիսկի և պատասխանատվության ստանձնում» (Schumpeter, 1911, էջ 217): Ադամ Սմիթը (1910) իր «Ազգերի հարստություն» աշխատության մեջ նշում է, որ ազգերի հարստացման գրավականը աշխատանքի բաժանման փոփոխություններն են: Օգտագործելով Սմիթի այս միտքը՝ ձեռնարկատիրությունը կարող է սահմանվել որպես մարդկային գործողությունների ուսումնասիրություն, որոնք բերում են աշխատանքի բաժանման փոփոխությունների: Ֆրենկ Քնայֆը (1921) և Պիտեր Դրաքերը (1970) համարում էին, որ ձեռնարկատիրությունը ռիսկի դիմելու մասին է: Պիտեր Դրաքերը (1985) ձեռնարկատիրությանն ավելի ուշ տվել է մեկ այլ բնորոշում, ըստ որի, ձեռնարկատիրությունը նորարարության դրսևորման ակտ է, որը ենթադրում է ձեռներեցի ռեսուրսների՝ առավել բարձր արժեքի փոխակերպման կարողության արտահայտում: Վերջինս առավել մեծ ուշադրություն է դարձնում ձեռնարկատիրությանը հատուկ նորարարությանը: Աթոյանը (2018) ձեռնարկատիրությունը սահմանում է որպես «մարդկանց տնտեսական ակտիվության առանձնահատուկ տեսակ և տնտեսական շահերի ստացմանն ուղղված նպատակասլաց գործունեություն, որը հիմնված է նախաձեռնության, պատասխանատվության և նորարարության գաղափարների վրա» (էջ 122): Մեկ այլ սահմանմամբ՝ ձեռնարկատիրությունն ազատ տնտեսական պայմաններում նորարարության հետևանք է: Ըստ այդմ, որոշումների ընդունման իրավունքը, որը հետևում է ազատ տնտեսական պայմաններից, հանդիսանում է ձեռնարկատիրության հիմնական նախապայմանը (Агеев, 1991):

Ձեռնարկատիրության սահմանումն առավել մեծ կարևորություն է ստանում հատկապես տվյալների հավաքագրման, վերլուծության և ներկայացման համար: Ըստ այդմ, կարևոր է դիտարկել նաև ձեռնարկատիրության ոլորտի ուսումնասիրություններով զբաղվող միջազգային կազմակերպությունների կողմից տրված սահմանումներին: Մասնավորապես, Համաշխարհային բանկը, երկրների միջև համեմատություններ իրականացնելու ընթացքում տվյալների համադրելությունը ապահովելու նպատակով հստակեցրել է ձեռնար-

կատիրության միասնական սահմանումը, այն է՝ անձի կամ խմբի գործունեությունը, որը նպատակաուղղված է կազմակերպաիրավական ձևի ներքո տնտեսության ֆորմալ հատվածում տնտեսական գործունեություն նախաձեռնելուն (Klapper, 2007):

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը՝ («Organisation for Economic Co-operation and Development» (OECD)), կախված նպատակից, ձեռնարկատիրությունը սահմանում է տարբեր կերպ, սակայն ըստ դրանցից առավել տարածվածի, ձեռնարկատիրությունն այն անձանց գործունեությունն է, ովքեր պատրաստակամություն են հայտնում ռիսկի դիմել նոր կամ նորարարական գաղափարներով՝ նոր ապրանքներ կամ ծառայություններ ստեղծելու համար (Ahmad, 2008):

Հետազոտություններից մեկի շրջանակներում Արժույթի միջազգային հիմնադրամը («International Monetary Foundation (IMF)») գնահատումներ իրականացնելու համար օգտվում է հետևյալ սահմանումից՝ ձեռներեց է համարվում նոր ստեղծված ընկերության գլխավոր տնօրենը կամ համապատասխան պաշտոնակատարը (Bernstein, 2018):

Ձեռնարկատրիության վերաբերյալ վիճակագրության հավաքագրումով և ուսումնասիրութունով ավելի քան 20 տարի 115 երկրներում զբաղվող «Ձեռնարկությունների համաշխարհային մոնիտոր»-ի («Global Entrepreneurship Monitor» (GEM))[1] կողմից երկար տարիներ կատարվել են աշխատանքներ ձեռնարկատիրության առավել ճշգրիտ սահմանումը գտնելու և դրանով ուղղորդվելու համար: GEM-ի կողմից ձեռնարկատիրությունը սահմանվում է որպես նոր բիզնեսի ստեղծման ցանկացած փորձ, ինչպիսիք են ինքնազբաղվածությունը, նոր բիզնեսի հիմնադրումը կամ առկա բիզնեսի ընդլայնումն անձի, անձանց թիմի կամ մեկ այլ բիզնեսի կողմից (GEM, 2020):

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (ըստ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի) ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է: Ի տարբերություն ձեռնարկատիրության, ձեռնարկություն կամ կազմակերպություն եզրույթը գործող օրենսդրական ակտերում բացակայում է: «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» նախկինում գործող օրենքի հոդված 4-ը ձեռնարկությունը սահմանում էր հետևյալ կերպ՝ «Ձեռնարկություն է հանդիսանում այն կազմակերպական միավորը, որը իրեն պատկանող կամ սեփականատիրոջ (հիմնադրի) կողմից հատկացված գույքով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, իր անունից կամ լիազորագրի հիման վրա ձեռք է բերում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ և պատասխանատվություն է կրում ստանձնած պարտավորությունների կատարման համար», ինչը որոշակիորեն պատկերացում է տալիս ձեռնարկության գաղափարի մասին, սակայն այս փաստաթուղթը ավելի քան 20 տարի առաջ

1 Հետայսու՝ GEM

ուժը կորցրել է և փաստացի այլ նորմատիվ ակտով ձեռնարկություն կամ կազմակերպություն եզրույթը չի սահմանվում:

Կազմակերպության մասին սահմանումները հաճախ սկսվում կամ պարունակում են «մարդկանց խումբ, որը գործում է միասին» միտքը: Օրինակ՝ Ռոբինը կարծում էր, որ կազմակերպությունը համակարգման ֆորմալ կառույց է, որը ներառում է երկու կամ ավելի մարդկանց, ունի հստակ նպատակ և որին բնութագրական է աշխատանքի բաժանումը և աստիճանական կառավարումը (1984): Կազմակերպության օրինակներ են ինչպես առևտրային ձեռնարկությունը այնպես էլ համալսարանը, ֆուտբոլային ակումբը կամ քաղաքական կուսակցությունները:

Ձեռնարկությունն իր հերթին կարելի է սահմանել որպես կազմակերպություն կամ կազմակերպությունների խումբ, որն ունի առևտրային նպատակներ (Bernard, 2012):

Ըստ Եվրոպական հանձնաժողովի՝ ձեռնարկություն է համարվում ցանկացած սուբյեկտ, որը ներգրավված է տնտեսական գործունեություն մեջ, անկախ դրա իրավական ձևից: Սա ներառում է ինքնազբաղված անձանց և ընտանեկան ձեռնարկություններին (որոնք զբաղվում են արհեստագործական կամ այլ գործունեությամբ) և գործընկերություններին կամ ասոցիացիաներին (որոնք պարբերաբար զբաղվում են տնտեսական գործունեությամբ) (European commission, 2003):

Մեր կարծիքով, ձեռնարկություն եզրը նախընտրելի է փոխարինել գործարար հասկացությունով, քանի որ ձեռնարկատերը միայն ձեռնարկության միջոցների տերն է, մինչդեռ գործարարը զբաղվում է նաև կառավարումով: Այսպիսով, գրականության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ձեռնարկատիրության և ձեռնարկության միասնական սահմանումը բացակայում է, սակայն դրանց ունեն որոշակի ընդհանրություններ:

Դրանք են՝

- ավելացված արժեքի ստեղծումը,
- նորարարությունը,
- ստեղծագործականությունը,
- ռիսկը,
- նախաձեռնողականությունը,
- սահմանափակ ռեսուրսների կառավարումը,
- հեռատես մտածողությունը,
- առաջնորդությունը:

Ձեռնարկատիրություն և տնտեսական աճ

Արդեն նշվեց, որ ձեռնարկատիրությունը տնտեսական զարգացման հիմնական խթաններից մեկն է: Այս թեզն արժանացել է բազում տնտեսագետների ուշադրությանը: Ձեռնարկատիրության և տնտեսական զարգացման միջև կապը շատ ավելի բարդ է, քան կարող է թվալ առաջին հայացքից: Մի շարք տնտեսագետներ պնդում են(Wennekers, 1999. Vyakarnam 2009. Klapper, 2010), որ ձեռնարկատիրությունը հանդիսանում է տնտեսական աճի և տն-

տեսության զարգացման գրավականը, սակայն միևնույն ժամանակ ընդունում են, որ այս կապը կարող է տարբեր լինել՝ կախված ձեռնարկատիրական միջավայրից և ձեռնարկատիրության ձևից: Այլ կերպ ասած, ձեռնարկատիրությունը տնտեսական աճին նպաստում է մի քանի հիմնական ուղղություններով, ինչպիսիք են՝ նորարարությունը, նոր աշխատատեղերը և այլն: Ձեռնարկատիրության կողմից այս գործոնների բացակայության դեպքում տնտեսական աճին նպաստելը նույնպես բացակայում է (Parton, 2014): Հատկանշական է, որ քանակական տվյալների ուսումնասիրությունները փաստում են, որ ձեռնարկատիրության մակարդակի և տնտեսական աճի միջև կապն ուղղակիորեն աճում է՝ կախված տնտեսական զարգացման փուլից և եկամուտներից: Մասնավորապես, բարձր եկամուտ ունեցող երկրներում այս կապը առավել ակնհայտ է, քան միջին եկամուտներ ունեցող երկրներում, իսկ ցածր եկամուտ ունեցող երկրներում կապը առհասարակ բացակայում է (Almodóvar-González 2020, Stam, 2009): Սա իհարկե հաստատում է այն պնդումը, որ ձեռնարկատիրությունը կարող է նպաստել տնտեսական աճին, եթե առկա է ձեռնարկությունների զարգացման և նորարարության համար բարենպաստ միջավայր:

Ժամանակի ընթացքում ձեռնարկատիրությունը արձանագրել է քանակական և որ առավել կարևոր է՝ որակական առաջընթաց, ինչը փաստում են մի շարք քանակական հետազոտություններ: Ընդ որում, առնվազն վերջին 20 տարիներին աշխարհում, ձեռնարկատիրական միջավայրից կախված, ձեռնարկատիրության մակարդակը, ինչպես նաև որակը փոխվել են անհամաչափ կերպով (GEMConsortium, 2020), այլ խոսքով՝ երկրներում գործող համակարգերով պայմանավորված՝ ձեռնարկատիրությունն ունեցել է տարբեր չափերի առաջընթաց, իսկ որոշ դեպքերում՝ հետընթաց:

Ոլորտի համաշխարհային միտումներ

Հաշվի առնելով մարդկության առաջ ծառացած ու ծառացող մարտահրավերները, հարկ է ձեռնարկատիրության ազդեցությունը դիտարկել ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական և էկոլոգիական համատեքստում (Apostolopoulos, 2018): Ձեռնարկատիրական գործունեությունը կարևոր նշանակություն ունի Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման 17 նպատակների իրականացման համար: Կայուն զարգացման տեսանկյունից ձեռնարկատիրության դերը առավել կարևորվում է հատկապես՝

SDG 1 – «Ամենուրեք վերացնել աղքատությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով»,

SDG 8 – «Խթանել կայացած, ներառական և կայուն տնտեսական աճ, լիարժեք և արտադրողական զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար»,

SDG 10 – «Կրճատել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև»:

Ձեռնարկատիրության կողմից իրականացվող նորարարությունը նպաստում է սահմանափակ ռեսուրսների առավել արդյունավետ բաշխմանը և

օգտագործմանը, ինչպես օրինակ՝ ձեռնարկատիրությունների տեխնոլոգիականացումը (Hodges, 2018): Շատ ոլորտներում, հատկապես սկսնակ ձեռնարկություններն իրենց գործունեության հենց սկզբում օգտագործում են տեխնոլոգիաներ, որոնց միջոցով հաջողվում է հասնել ավելի բարձր արտադրողականության՝ սահմանափակ ռեսուրսներով ստանալ ավելի մեծ արդյունք: Դրան կարող է նպաստել ինչպես նոր որակի սարքավորումների ձեռքբերումը, այնպես էլ օրինակ՝ «Մեծ տվյալների վերլուծությունը»[2], ինչը նպաստում է գիտելիքահեն արդյունաբերությանն անցում կատարելուն:

Ձեռնարկատիրության քանակական և որակական առաջընթացը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, սակայն վերջին տարիներին առավել դիտարժան է հատկապես ձեռնարկատիրական կրթությունը: Ձեռնարկատիրության դրական արդյունքներն ավելացնելու լավագույն լուծումներից մեկը ձեռնարկատիրական կրթության ինստիտուտի ստեղծումը և բարելավումն է (օրինակ՝ Lackeus, 2015: Maiyo, 2016), քանի որ ձեռնարկատիրության միջոցով գոյանում են այնպիսի ունակություններ, որոնց գործնականում կարելի է հասնել տարիների փորձի և ձախողումների միջոցով և որոնց մասին տեղեկությունները, ավանդական կրթական ծրագրերում, լավագույն դեպքում, ընդգրկված են մակերեսորեն:

Ավանդական կրթությունը ըստ էության հանդիսանում է գիտելիքի և կարողությունների տրանսֆորմացիան, մինչդեռ ձեռնարկատիրական կրթությունը հանդիսանում է վերաբերմունքի և դրդապատճառների տրանսֆորմացիայի գործընթաց (Hansemark, 1998): Ձեռնարկատիրական կրթությունը թույլ է տալիս զարգացնել հնարավորությունները՝ ճանաչելու և օգտագործելու, նոր ձեռնարկություն ստեղծելու ու կայանալու, ինչպես նաև ստեղծագործական և քննադատական կերպով մտածելու ունակությունները (Raposo, 2011), այդպիսով նպաստելով ձեռնարկատիրական միջավայրի բարելավմանը:

Աշխարհում մի շարք կրթական հաստատություններ արդեն ունեն ձեռնարկատիրության և նորարարության կայացած կրթական ծրագրեր, ինչը կրթական հաստատություններին տալիս են զարգացման նոր հնարավորություններ, ձեռներեցները, իրենց հերթին, դառնում են առավել բանիմաց և ճկուն: Բացի դրանից, սա հնարավորություն է տալիս վերահմաստավորել ձեռնարկատիրական միջավայրը և խթանել ձեռնարկատիրության ոլորտում գիտահետազոտական մշակումների փոխանցումը[3] (Brito, 2018):

Եզրակացություն

Այսպիսով, բնակչության թվի աճի, տնտեսական համակարգային ցնցումների և ռեսուրսների սահմանափակության համատեքստում ձեռնարկությունների և ձեռնարկատիրության դերն անգնահատելի է, քանի որ դրանք մեծապես նպաստում են տնտեսության աճին, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, աղքատության հաղթահարմանը և մի շարք այլ

2 «Big data analysis»
3 «R&D transfer»

հիմնախնդիրների լուծմանը:

Ձեռնարկատիրության և ձեռնարկության միասնական սահմանումը բացակայում է, սակայն դրանց մեծ մասն ունեն որոշակի ընդհանրություններ, որոնցից են ավելացված արժեքի ստեղծումը, նորարարությունը, ստեղծագործականությունը, ռիսկը, նախաձեռնողականությունը, ռեսուրսների կառավարումը, հեռատես մտածողությունը և առաջնորդությունը:

Իրականացված հետազոտությունները փաստում են ձեռնարկատիրության և տնտեսական աճի միջև որոշակի կապի մասին, սակայն այս կապը առավել ակներև է այն երկրներում, որտեղ առկա է զարգացման և նորարարության համար բարենպաստ միջավայր:

Օգտագործված գրականության ցանկ

Աթոյան Կ., Քալանթարյան Պ., Մարդումյան Մ. (2018) *Բիզնեսի ներածություն:* Երևան, հեղինակային հրատարակություն, հասանելի է՝ https://www.researchgate.net/profile/Koryun-Atoyan

ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք: Հոդված 2: Երևան: Ընդունված ՀՀ ԱԺ-ի կողմից 05.05.1998, հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=148978

Աղաջանյան, Հ. (2009) *Տնտեսագիտության տեսություն. մաս 1:* Երևան, հեղինակային հրատարակություն:

Агеев, А.И. (1991). *Предпринимательство: проблемы собственности и культуры/* Москва: Наука. (110–115):

Ahmad N., Seymour G. R., (2008) *DEFINING ENTREPRENEURIAL ACTIVITY: Definitions Supporting Frameworks for Data Collection.* OECD. Amsterdam. Retrieved from https://www.oecdwatch.org/oecd-ncps/about-the-oecd/ (In Eng.)

Almodóvar-González M. Fernández-Portillo A. Díaz-Caserob J. (2020) Entrepreneurial activity and economic growth. A multi-country analysis. Vigo. *European Research on Management and Business Economics.* Volume 26 (9–17) (In Eng.)

Apostolopoulos, N.; Al-Dajani, H.; Holt, D.; Jones, P.; Newbery, R. (2018) *Entrepreneurship and the Sustainable Development Goals.* Emerald Publishing Limited. Bingley, Retrieved from https://www.researchgate.net/publication/327921292_Entrepreneurship_and_the_Sustainable_Development_Goals (In Eng.)

Baron RA, Henry RA (2010). *How Entrepreneurs Acquire the Capacity to Excel: Insights From Research on Expert Performance.* Strateg. Entrep. J., 4(1): 49–65 (In Eng.)

Baumol, W. J. (1968). Entrepreneurship in economic theory. *The American Economic Review*, 58, (64–71) (In Eng.)

Bernard, S. A. (2012). *An introduction to enterprise architecture.* Bloomington: AuthorHouse. (In Eng.)

Bernstein, S., Colonnelli E., Malacrino D., McQuade T. (2018). *Who Creates New Firms When Local Opportunities Arise?* Working Paper No. 18/215. IMF. Washington. (In Eng.)

Brito, S. (2018) *Entrepreneurship – Trends and Challenges.* Potential and Development Entrepreneurship Analitics between Latin and Central America, European Universities Project. Retrieved from https://www.researchgate.net/publication/324212902_Entrepreneurship_-_Trends_and_Challenges (In Eng.)

Cuervo, Á., Ribeiro, D., Roig, S. (2008). *Entrepreneurship: Concepts, Theory and Perspective.* Introduction, Retrieved from: http://www.uv.es/bcjauveg/ docs/LibroCuervoRibeiroRoigIntroduction.pdf (In Eng.)

Decker R., Haltiwanger J., Jarmin R, Miranda J. (2014) *The secular decline in business dynamism in the US.* University of Maryland doi:12:3952–3990 (In Eng.)

Drucker, P. (1970). Entrepreneurship in Business Enterprise. *Journal of Business Policy,* Vol: 1. (65–74)

Drucker, P. (1985). *Innovation and Entrepreneurship: Practice and Principle.* Harper Business, New York. (In Eng.)

European commission, (2003). *Commission Recommendation of concerning the definition of micro, small and medium–sized enterprises.* ANNEX I. Retrieved from https://ec.europa.eu/info/sites/default/files/consultation–block–exemption–regulation–draft–regulation–first–draft–annex–i_en_0.pdf (In Eng.)

GEMConsortium. (2020). *Global Entrepreneurship Monitor 2019/2020 Global Report.* Retrieved from https://www.gemconsortium.org/report/gem–2019–2020–global–report (In Eng.)

Hansemark, O. (1998). The effects of a program on need for achievement and locus of control of reinforcement. *International Journal of Entrepreneurship Behaviour and Research,* 4(1), 28–50. (In Eng.)

Hodges NJ. (2018). Trends in the European textile and apparel industries. Knowledge–Intensive Entrepreneurship. *International Studies in Entrepreneurship.* Vol. 39. Cham: Springer. pp. 29–43. (In Eng.)https://www.gemconsortium.org/wiki/1149 (դիտված 21.12.2020) (In Eng.)

Klapper L., Amit R., Guillén M. F., Quesada J. M. (2007). *Entrepreneurship and Firm Formation Across Countries.* Policy Research Working Paper; No. 4313. Washington, DC. © World Bank. https://openknowledge.worldbank.org/handle/10986/7379 (In Eng.)

Klapper, L., R. Amit, M. F. Guillen, and J. M. Quesada. (2010). *Entrepreneurship and Firm Formation across Countries.* / In International Differences in Entrepreneurship, edited by J. Lerner and A. Schoar. Chicago, IL: The University of Chicago Press (In Eng.)

Knight, Frank H. (1921). *Risk, Uncertainty, and Profit.* Boston, MA: Hart, Schaffner & Marx; Houghton Mifflin Company, Retrieved from: https://fraser.stlouisfed.org/files/docs/publications/books/risk/riskuncertaintyprofit.pdf (In Eng.)

Lackeus, M. (2015). *Entrepreneurship in education.* OECD. Amsterdam. Retrieved from https://www.oecd.org/cfe/leed/BGP_Entrepreneurship–in–Education.pdf (In Eng.)

Lazear, E. P. *Entrepreneurship.* (2003) National Bureau of Economic Research (Cambridge, MA) Working Paper No. W9109 (In Eng.)

Maiyo, J.K., Rono, A.J., Ng'elechei, R.J., Tubey R. (2016). An analysis of the trands and issues in entrepreneurship Education. Eldoret, African journal of technology & vocational education & training. (179–187) (In Eng.)

Naudé, Wim (2013). *Entrepreneurship and Economic Development: Theory, Evidence and Policy.* IZA Discussion Paper No. 7507, Retrieved from: https://ssrn.com/

abstract=2314802 (In Eng.)

Parton, B. Valerio, A. Robb A. M. (2014). *Entrepreneurship Education and Training Programs around the World.* Washington, DC. © World Bank https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/18031/9781464802027.pdf (In Eng.)

Patankar, A. (2014). *A Literature Review on Entrepreneurial Development and its antecedents.* 3rd Annual

Raposo, M., Paço, A.M. (2011). *Entrepreneurship education: Relationship between education and entrepreneurial activity.* Colegio Oficial de Psicólogos del Principado de Asturias. (In Eng.)

Robbins, S. P. (1984). *Essentials of Organization Behavior. Englewood Cliffs,* NJ: Prentice Hall.

Wennekers, S., and R. Thurik. (1999). Linking Entrepreneurship and Economic Growth. *Small Business Economics* 13: 27–55 (In Eng.)

Schumpeter, J. A. (1911). Theorie der wirtschaftlichen Entwicklung. Leipzig, Germany: Duncker and Humblot. Retrieved from: https://www.mises.at/static/literatur/Buch/schumpeter-theorie-der-wirtschaftlichen-entwicklung-eine-untersuchung-ueber-unternehmergewinn-kapital-kredit-zins-und-den-konjunkturzyklus.pdf (In Ger.)

Smith, A. (1910). The Wealth of Nations. Knopf: New York. *Economic Journal* 38(152): 527–542. (In Eng.)

Stam, E., Andre S. (2009). *Types of Entrepreneurship and Economic Growth.* United Nations University – Maastricht Economic and Social Research Institute on Innovation and Technology (MERIT). (In Eng.)

United Nations General Assembly, (2015). *Transforming our world: The 2030 agenda for sustainable development A/RES/70/1.* Retrieved from: https://www.unfpa.org/resources/transforming-our-world-2030-agenda-sustainable-development (In Eng.)

Urbano, D. and Aparicio, S. and Audretsch, D. (2019). *Twenty-five years of research on institutions, entrepreneurship, and economic growth : what has been learned?*, Small business economics., 53 (1). pp. 21–49 (In Eng.)

Vlasceanu, M. (2010). *Social economy and entrepreneurship. an analysis of nonprofit sector.* Polirom publishing house, Iasi Romania. (In Eng.)

Vyakarnam, S. (2009). *Driving Forces of Entrepreneurship Education.* In Educating the Next Wave of Entrepreneurs: Unlocking Entrepreneurial Capabilities to Meet the Global Challenges of the 21st Century, edited by C. Volkmann, K. E. Wilson, S. Mariotti, D. Rabuzzi, S. Vyakarnam, and A. Sepulveda. Cologny, Switzerland: World Economic Forum. (In Eng.)

References

Atoyan, K., Qalantaryan, P., Mardumyan M. (2018) *Biznesi Neratsutyun* [Introduction to business], Yerevan, hexinakayun hratarakutyun, https://www.researchgate.net/profile/Koryun-Atoyan (In Arm.)

HH Qaxaqaciakan orensgirq, hodvac 2 [RA Civil Code: Article 2:], Yerevan, Endunvac HH AJ-i koxmic 05.05.1998, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=148978 (In Arm.)

Aghajanyan, H. (2009) *Tntesagitutyan tesutyun mas 1* [Theory of Economics: Part 1], Yerevan, hexinakayun hratarakutyun (In Arm.)

Ageev, A.I. (1991). *Predprinimatel'stvo: problemy sobstvennosti i kul'tury* [Entrepreneurship: Problems of Property and Culture] / Moskva: Nauka. (110–115) (In Rus.)

Ahmad N., Seymour G. R., (2008) *DEFINING ENTREPRENEURIAL ACTIVITY: Definitions Supporting Frameworks for Data Collection.* OECD. Amsterdam. Retrieved from https://www.oecdwatch.org/oecd-ncps/about-the-oecd/ (In Eng.)

Almodóvar-González M. Fernández-Portillo A. Díaz-Caserob J. (2020) Entrepreneurial activity and economic growth. A multi-country analysis. Vigo. *European Research on Management and Business Economics.* Volume 26 (9–17) (In Eng.)

Apostolopoulos, N.; Al-Dajani, H.; Holt, D.; Jones, P.; Newbery, R. (2018) *Entrepreneurship and the Sustainable Development Goals.* Emerald Publishing Limited. Bingley, Retrieved from https://www.researchgate.net/publication/327921292_Entrepreneurship_and_the_Sustainable_Development_Goals (In Eng.)

Baron RA, Henry RA (2010). *How Entrepreneurs Acquire the Capacity to Excel: Insights From Research on Expert Performance.* Strateg. Entrep. J., 4(1): 49–65 (In Eng.)

Baumol, W. J. (1968). Entrepreneurship in economic theory. *The American Economic Review*, 58, (64–71) (In Eng.)

Bernard, S. A. (2012). *An introduction to enterprise architecture.* Bloomington: AuthorHouse. (In Eng.)

Bernstein, S., Colonnelli E., Malacrino D., McQuade T. (2018). *Who Creates New Firms When Local Opportunities Arise?* Working Paper No. 18/215. IMF. Washington. (In Eng.)

Brito, S. (2018) *Entrepreneurship – Trends and Challenges.* Potential and Development Entrepreneurship Analitics between Latin and Central America, European Universities Project. Retrieved from https://www.researchgate.net/publication/324212902_Entrepreneurship_-_Trends_and_Challenges (In Eng.)

Cuervo, Á., Ribeiro, D., Roig, S. (2008). *Entrepreneurship: Concepts, Theory and Perspective.* Introduction, Retrieved from: http://www.uv.es/bcjauveg/ docs/LibroCuervoRibeiroRoigIntroduction.pdf (In Eng.)

Decker R., Haltiwanger J., Jarmin R, Miranda J. (2014) *The secular decline in business dynamism in the US.* University of Maryland doi:12:3952–3990 (In Eng.)

Drucker, P. (1970). Entrepreneurship in Business Enterprise. *Journal of Business Policy,* Vol: 1. (65–74)

Drucker, P. (1985). *Innovation and Entrepreneurship: Practice and Principle.* Harper Business, New York. (In Eng.)

European commission, (2003). *Commission Recommendation of concerning the definition of micro, small and medium-sized enterprises.* ANNEX I. Retrieved from https://ec.europa.eu/info/sites/default/files/consultation-block-exemption-regulation-draft-regulation-first-draft-annex-i_en_0.pdf (In Eng.)

GEMConsortium. (2020). *Global Entrepreneurship Monitor 2019/2020 Global Report.* Retrieved from https://www.gemconsortium.org/report/gem-2019-2020-global-report (In Eng.)

Hansemark, O. (1998). The effects of a program on need for achievement and locus of

control of reinforcement. *International Journal of Entrepreneurship Behaviour and Research,* 4(1), 28–50. (In Eng.)

Hodges NJ. (2018). Trends in the European textile and apparel industries. Knowledge-Intensive Entrepreneurship. *International Studies in Entrepreneurship.* Vol. 39. Cham: Springer. pp. 29–43. (In Eng.)https://www.gemconsortium.org/wiki/1149 (դիտված 21.12.2020) (In Eng.)

Klapper L., Amit R., Guillén M. F., Quesada J. M. (2007). *Entrepreneurship and Firm Formation Across Countries.* Policy Research Working Paper; No. 4313. Washington, DC. © World Bank. https://openknowledge.worldbank.org/handle/10986/7379 (In Eng.)

Klapper, L., R. Amit, M. F. Guillen, and J. M. Quesada. (2010). *Entrepreneurship and Firm Formation across Countries. /* In International Differences in Entrepreneurship, edited by J. Lerner and A. Schoar. Chicago, IL: The University of Chicago Press (In Eng.)

Knight, Frank H. (1921). *Risk, Uncertainty, and Profit.* Boston, MA: Hart, Schaffner & Marx; Houghton Mifflin Company, Retrieved from: https://fraser.stlouisfed.org/files/docs/publications/books/risk/riskuncertaintyprofit.pdf (In Eng.)

Lackeus, M. (2015). *Entrepreneurship in education.* OECD. Amsterdam. Retrieved from https://www.oecd.org/cfe/leed/BGP_Entrepreneurship-in-Education.pdf (In Eng.)

Lazear, E. P. *Entrepreneurship.* (2003) National Bureau of Economic Research (Cambridge, MA) Working Paper No. W9109 (In Eng.)

Maiyo, J.K., Rono, A.J., Ng'elechei, R.J., Tubey R. (2016). An analysis of the trands and issues in entrepreneurship Education. Eldoret, African journal of technology & vocational education & training. (179–187) (In Eng.)

Naudé, Wim (2013). *Entrepreneurship and Economic Development: Theory, Evidence and Policy.* IZA Discussion Paper No. 7507, Retrieved from: https://ssrn.com/abstract=2314802 (In Eng.)

Parton, B. Valerio, A. Robb A. M. (2014). *Entrepreneurship Education and Training Programs around the World.* Washington, DC. © World Bank https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/18031/9781464802027.pdf (In Eng.)

Patankar, A. (2014). *A Literature Review on Entrepreneurial Development and its antecedents.* 3rd Annual

Raposo, M., Paço, A.M. (2011). *Entrepreneurship education: Relationship between education and entrepreneurial activity.* Colegio Oficial de Psicólogos del Principado de Asturias. (In Eng.)

Robbins, S. P. (1984). *Essentials of Organization Behavior. Englewood Cliffs,* NJ: Prentice Hall.

Wennekers, S., and R. Thurik. (1999). Linking Entrepreneurship and Economic Growth. *Small Business Economics* 13: 27–55 (In Eng.)

Schumpeter, J. A. (1911). Theorie der wirtschaftlichen Entwicklung. Leipzig, Germany: Duncker and Humblot. Retrieved from: https://www.mises.at/static/literatur/Buch/schumpeter-theorie-der-wirtschaftlichen-entwicklung-eine-untersuchung-ueber-unternehmergewinn-kapital-kredit-zins-und-den-konjunkturzyklus.pdf (In Ger.)

Smith, A. (1910). The Wealth of Nations. Knopf: New York. *Economic Journal* 38(152): 527–542. (In Eng.)

Stam, E., Andre S. (2009). *Types of Entrepreneurship and Economic Growth.* United Nations University – Maastricht Economic and Social Research Institute on Innovation and Technology (MERIT). (In Eng.)

United Nations General Assembly, (2015). *Transforming our world: The 2030 agenda for sustainable development A/RES/70/1.* Retrieved from: https://www.unfpa.org/resources/transforming-our-world-2030-agenda-sustainable-development (In Eng.)

Urbano, D. and Aparicio, S. and Audretsch, D. (2019). *Twenty-five years of research on institutions, entrepreneurship, and economic growth : what has been learned?*, Small business economics., 53 (1). pp. 21-49 (In Eng.)

Vlasceanu, M. (2010). *Social economy and entrepreneurship. an analysis of nonprofit sector.* Polirom publishing house, Iasi Romania. (In Eng.)

Vyakarnam, S. (2009). *Driving Forces of Entrepreneurship Education.* In Educating the Next Wave of Entrepreneurs: Unlocking Entrepreneurial Capabilities to Meet the Global Challenges of the 21st Century, edited by C. Volkmann, K. E. Wilson, S. Mariotti, D. Rabuzzi, S. Vyakarnam, and A. Sepulveda. Cologny, Switzerland: World Economic Forum. (In Eng.)

Акоп Тарпошян

Консультант Консультационной службы по вопросам менеджмента ЗАО «Америя», аспирант кафедры Академии государственного управления Республики Армения

Эл. адрес: hakobtarposhyan@paara.am

ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВО. ВАЖНОСТЬ И ТЕНДЕНЦИИ

Предпринимательство — это двигатель экономики, который играет жизненно важную роль в экономическом развитии, а также способствует значительным изменениям в рыночной экономике. Тем не менее, ряд вопросов в этой области все еще требует выявления и решения.

В рамках данного исследования, во-первых, была изучена и проанализирована сущность предпринимательства. В результате обзора литературы была разработана концепция полного определения предпринимательства, которая может служить методологией для дальнейших научных исследований и статистического анализа. Кроме того, была проанализирована литература о взаимосвязи между предпринимательством и экономическим ростом, а также бизнес-тенденциями в мире. Последнее может стать новой перспективой для дальнейших исследований в сфере предпринимательства в Армении.

Ключевые слова: предпринимательство, организация, экономический рост, бизнес, инновации, определение бизнеса, ограниченные ресурсы

Hakob Tarposhyan
Cansultant at Management Advisory Service, «Ameria» CJSC,
Ph.D. Student at the Public Administration Academy of the Republic of Armenia
Email: hakobtarposhyan@paara.am

ENTREPRENEURSHIP. IMPORTANCE AND TRENDS

Entrepreneurship is the engine that drives the economy, which plays a vital role in economic development, as well as drives significant changes in market economy. However, a number of issues in the field still need to be identified and resolved.

In the framework of this research, first, the essence of entrepreneurship has been studied and analyzed. As a result of the literature review, a concept of a complete definition of entrepreneurship has been developed, which can serve as a methodology for further scientific research and statistical analysis. In addition, the literature on the relationship between entrepreneurship and economic growth, as well as business trends in the world has been reviewed. The latter can become a new perspective for further research in the field of entrepreneurship in Armenia.

Key words: entrepreneurship, organization, economic growth, business, innovation, business definition, scarce resources.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2021թ. օգոստոսի 24-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2021թ. սեպտեմբերի 25-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության 2021թ. հոկտեմբերի 10-ին: